

ՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ.

Վանի Շրջանային Վարչութիւնն իւր 23 յունիսի ներկայ 1915 թ. գրութեամբ դիմումն է անում Հայ Ժողովրդին և խնդրում օգնութեան հասնել իրենց շրջանի ծով կարիքներին ով ինչով կարող է: Եւ յիրաւի քրդերի կոտորածից ազատուածները մեծ քանակութեամբ եկել և ապաստան են գտել Վանում ու մօտիկ շրջակայքում: Անթիւ են հիւանդների և սննդի կարօտ հայ դժբախտների թիւը: Թող ամեն տեղ արձագանք գտնի Վանի Շրջանային Վարչութեան այս կոչը և իւրաքանչիւր Հայ իւր բարոյական պարտականութիւնը կատարի դէպի մեր տառապեալ քոյրերն ու եղբայրները լիառատ օգնութեամբ:

Ահա այդ սրտաճմլիկ կոչը.

Հայրենակիցներ!

Հաճոյքով լսեցինք այն բուռն ոգևորութիւնը, որ առաջ բերին Վանի մի ամսեայ ինքնապաշտպանութեան կռիւները Կովկասի և գաղութներու մեր հայրենակիցներու մէջ:

Ժողովուրդը ուժասպառ, յամեցած և քայքայուած, իր յոյսը դրաւ Կովկասի և արտասահմանի եղբայրներու վրայ, որ անոնք կուգան իր աւրած տուններու, քանդուած օճախներու, հազարաւոր հիւանդներու և քայքայուած տնտեսութեան վերակազմութեան օժանդակելու:

Շնորհակալութեամբ արդէն ստացանք բաւականաչափ գումարներ Ս. Էջմիածնէն, Թիֆլիսէն և Բագուէն, տեղս հասաւ «Եղբայրական Օգնութեան Կոմիտէի» բժշկական խումբը՝ մէկ բժիշկ, մէկ ֆէլդշեր և մէկ ղթութեան քոյր: Երեկ տեղս հասան Թիֆլիսի Կ. Կոմիտէի և հայ-Բարեգործական Ընկերութեան բժշկական խումբը՝ ևս—2 բժիշկ, 3 կին բժիշկ օգնականներ,—Կ. Կոմիտէի ներկայացուցիչ պ. Մարգիս Արովեանը գաղթականներուն սնունդ բաշխելու գործը կարգադրելու համար: Երկու խումբերն ալ բերած են բաւականաչափ դեղօրայք, հագուստ, շաքար և այլն,

Արդէն գործի ենք սկսած: «Եղբայրական Օգնութեան» Կո-

միտէն բացած է քաղաքի մէջ բուժարան իր բժշկով և օգնակա-
նով: Պատրաստութեան մէջ ենք վարակիչ հիւանդութիւններու ա-
ռանձին հիւանդանոց մը բանալ քանի մը օրէն: Վեհափառ Կաթո-
ղիկոսը նոյնպէս հրամայած է 56 անկողինով հիւանդանոց մը բա-
նալ: Որոշած ենք այդ հիւանդանոցը հիմնել կանանց, երեխանե-
րու և առհասարակ ոչ վարակիչ հիւանդութիւններու համար:

Թիֆլիսի Կ. Կոմիտէի բժիշկներէն պ. Քոչարեանը պիտի
մեկնի վաղն իսկ Ոստան, հոն բժշկական գործը կազմակերպելու:

Երևի գիտէք, որ այս գործերը վարելու համար արդէն կազմուած
է Սրբազան Այվատեանի նախագահութեամբ «Եղբայրական Օգ-
նութեան» Կոմիտէ մը: Կ. Կոմիտէի բժշկական խումբը գալէն ետք
գործը համերաշխութեամբ և միացեալ կերպով վարելու համար
համաձայնութեան եկանք Կ. Կոմիտէի գլխաւոր բժիշկ պ. Հ. Օհան-
ջանեանին—պ. Ս. Արովեանը վերցուցինք վերոյիշեալ կազմին մէջ:

Այս ձևով գործը կազմակերպելու ձևին մէջ դրինք գրեթէ:
Փութամ աւելացնել և այն, որ նախ քան Կովկասի օգնութեան
հասնելը և գալէն ետքն ալ աշխատեցինք տեղական միջոցներով ալ
կազմակերպել գաղթականներու օգնութեան գործը:

Տեղական միջոցներով մինչև հիմայ հայթայթած ենք մօտ
10,000 փութ ցորեն, որու կէսը արդէն ցրուած է և կէսն ալ նոր
կը ցւրուի, կազմուած Կոմիտէի տրամադրութեան տակ: Արդէն
բաշխած ենք կարիք ունեցող գեղերուն մօտ 8—10,000 ոչխար
և 2000 էն աւելի սևատաւար:

Դիւրութիւն ենք ստեղծած Ոստանի մէջ ուր բոլոր հիւանդ-
ները ձրիաբար. տեղական միջոցներով կաթ, մածուն և այլն կըս-
տանան: Այսպիսով աշխատած ենք զուրսի օժանդակութեան հետ
տեղացին ալ մասնակից ընելու, ժողովուրդը շայլասերելու համար:

Կարիքի պատկերը այսպէս կարելի է պատկերացնել:

Ամբողջ Վասպուրականը հիւանդանոցի է փոխուած: Տուն
չկայ, որ մէկէ աւելի հիւանդներ չունենայ: Աւելի ծանր է վիճակը
Ոստանի-Աղթամարի շրջանին մէջ, ուր հաւաքուած են Սպարկեր-
տի, Մամրզանքի, Խիզանի, Կարկառի և Կարճկանի ժողովուրդը—15
—25000 հոգի, որոնցմէ նուազագոյնը 2—3000-ը հիւանդ են: Հի-
ւանդութեան տեսակները մեծ մասամբ ջիֆն է իր բոլոր նմուշ-
ներով և տիգանթէրի և այլն—նոյնն է և Թեմար կոչուած շրջանին
մէջ: Հոն հաւաքուած էին և են Ալճաւազի և Բերկրիի շրջանի հայե-
րը: Հիւանդութիւնները սոսկալի են և բժշկական ոչ մէկ օգնու-
թիւն չենք կրցած հասցնել: Աւելի սոսկալի է սուրի քաշուած
Արճէշի վիճակը, հոն մօտ 5000 ժողովուրդ կայ անտէր անտի-
րական և հիւանդ, և իբր աւելի հեռու ինկած գաւառ աւելի քիչ է
խնամքի արժանացած: Ի դէպ է ըսել, որ առհասարակ բժիշկնե-

բու հետ պայմանաւորուելու էք. որ անոնք ի պահանջել հարկին համաձայնեն գաւառներն ալ երթալ: Գերադասութիւն տուէք տղամարդ ֆէլդշերներուն, որոնք միայն կրնան դիմանալ գաւառի և գիւղի դժուարութեանց: Իսկ մնացած գաւառները, ուր թէև գաղթականներ չկան, բայց ամբողջ ազգաբնակչութիւնը հիւանդ է: Պէտք է նկատել, որ եթէ շուտով համաճարակի առաջքը չաւնուի, ժողովուրդը, դեռ ձմեռը չհասած, սովամահ պիտի ըլլայ, որովհետև աշխատող ձեռքերը, եթէ դաշտային աշխատանքին չհասնեն, բերքերը կը մնան անքաղ:

Պէտք է ուրեմն անմիջապէս լրացնել բժշկական օգնութեան գործը:

Անհրաժեշտ են բժիշկներ և օգնականներ և դեղօրայք.— 1) Արճէշի, 2) Ալճաւազի, 3) Թիմարի, 4) Բերկրիի, 5) Արճակի, 6) Հայոց-Չորի, 7) Շատախի, 8) Մոկոսի շրջաններու համար: Եթէ անհնար է բժիշկներ գտնել, կարելի է 4 բժիշկով և քանիմը ֆէլդշերներով դռնանալ երկու գաւառին մէկ բժիշկ տալով, այսինքն 2000 հիւանդին՝ մէկ հոգի: Բժշկական գործի հետ պէտք է կազմակերպել և սնունդի ու նպաստի գործը: Փաստերը ցոյց են տուած, որ շատերը մահացած են սովի և շատերը հիւանդացած՝ սնունդ չըլլալուն պատճառով:

Որոշած ենք մեր տրամադրութեան տակ եղած մօտ 50,000 ռուբլի գումարէն որոշ տոկոս մը յատկացնել հացահատիկներու գնման թէ ներկայի և թէ ձմրան համար:

Պէտք է նոր գումարներ հասցնել հիւանդանոցներու, բժշկական օգնութեան, սնունդի և այլ պահանջներ գոհացնելու համար: Հաւաքելու էք հին հագուստներ կամ կտորներ՝ հագուստի համար: Պէտք են մեծ քանակութեամբ թէյ, շաքար և այլն, որովհետև տեղս ոչինչ չի գտնուիր:

Այս բոլորի աւելցնելու է և ինտելլիգենտ ժողովրդասէր ու ձեռնհաս մարդկանց պահանջը: Տեղացիներու մեծ մասը թէև յոգնած, բայց նորէն գործի գլուխն է, բայց անոր ուժերը անբաւական են այս յոգնութեամբ և՛ կառավարական գործերը տանելու, և՛ տեղական ինքնապաշտպանութիւնը ապահովելու, և՛ գաղթականական գործը տանելու:

Կոչ պէտք է ընել երիտասարդութեան, որ գոնէ քանի մը ամսով երկիր մտնէ գաղթականներու օգնութեան և տեղաւորման գործը կազմակերպելու համար:

Եթէ ամփոփելու ըլլանք մեր ըսածները, կստանանք հետեւեալը.—

Ա. Գործը պրեթէ կազմակերպուելու վրայ է:

Բ. Անհրաժեշտ է առնուազն 4—5 բժիշկ և բաւականաչափ

Ֆելդշերներ՝ դեղօրայքով:

Գ. Պէտք է փութացնել սնունդի գործը, ամբարելու համար ժամանակին հաց և ալիւն, ինչպէս նաև դուրսէն բերել տալ թէյ, շաքար և ալիւն:

Դ. Անհրաժեշտ է փութացնել երկրագործական գործիքներու առաքումը առ առաւելն մինչև յունիսի կէսը—հնձող մեքենայ, գերանդի, կալսող և քամող մեքենաներ և ալիւն:

Ե. Գործի կազմակերպութիւնը ուժեղացնելու համար հայ ինտելլիգենտ ուժերու ներկայութեան հրամայական պահանջը:

Ձեր ուշադրութեան ներկայացնելով այս բոլորը, կը խնդրեմ դիմել բոլոր միջոցներուն, կոչ ընել ամենքին, որ իրենց զոհողութիւնները, որքան կարելի է շուտ և առատ, ժամանակին տեղ հասցնեն, որպէսզի դեռ ձմեռը չեկած՝ կարող ըլլանք գործերը հիմնականապէս կազմակերպել:

Վանի նահանգապետ:

Վանի նշքանային վարչութիւն

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԶԱՅՆԸ.

Ազգիս Վեհափառ Կաթողիկոսը յունիսի 14-ին ստացել է Մանազկերտից՝ (Բերդ) տեղական առաջնորդական փոխանորդ Յովհաննէս քահանայ Տ. Աւետիսեանից 1915 թ. 1-ն յունիսի թուակիր գրութիւնը, որով նկարագրում է Մանազկերտի ու շրջակայքի դժբախտ հայերի տանջալից գրութիւնը ու կոտորածը: Ահա այդ փաստալից գրութիւնը, որ բերում ենք այստեղ, մեզնից անկախ պատճառով որոշ կրճատումներ անելով:

Վեհափառ Տէր,

Նախորդ ամսոյ 28 թուակիր գրութիւնոյ, որ պ. Ստեփանի միջոցաւ դրկած էի, կը յուսամ թէ հիմա ստացած ու հասու եղած կ'ըլլաք Հայաստանի մէջ տեղի ունեցած արիւնոտ դէպքերուն ու արիւնոտ շտանգներու վրայ: Գրիչս դարձեալ հայի արիւնի մէջ թաթխելով է, որ կը գրեմ, զուլում ու արիւն կը շարունակուի, ֆանատիկ իսլամութիւն գլուխը վեր վերուցեր է, պաշտօնական